

ԿԶՆԱԿ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՓՈՐՁՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Սիրելի՛ սովորող
Գրածդ պիտի լինի մեկ ամբողջական շարադրանք, որը պիտի ունենա սկիզբ, միջնամաս և ավարտ: Սկիզբը գրելուց հետո ձևակերպի՛ր պնդումդ: Շատ ուշադի՛ր կարդա, որ կարողանաս երկու տեքստերն էլ համադրել (ինտեգրել) գրածդ պնդումի շուրջ և ապացուցել տեսակետդ:
Հիշի՛ր՝ պարբերությունները ևս պիտի ունենան սկիզբ, հիմնամաս և ավարտ: Հետևի՛ր նաև գրածիդ ուղղագրությանն ու կետադրությանը. մտքերդ քերականորեն ճի՛շտ արտահայտիր:
Սպասելու ենք ինքնատիպ դատողություններիդ: Շատ կարևոր է քո անձնական կարծիքը:
Հաջողություն քեզ:

Ի՞ՆՉԸ ԿԱՐՈՂ Է ՄԱՐԴՈՒՆ ՄՂԵԼ ԱՆՊԱՍԵԼԻ ՔԱՅԼԵՐԻ: ԳՆԱՀԱՏԻ՛Ր ՀԵՐՈՍՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՐԻ՛Ր՝ ԴՈՒ ԵՐԲԵՎԷ ԿԱՏԱՐԵ՞Լ ԵՍ ԱՆՊԱՍԵԼԻ ԱՐԱՐՔ (ԿԱՄ ԿՈՒԶԵԻՐ ԿԱՏԱՐԵԼ), Ո՞ՐՆ Է ԵՂԵԼ/ԿԼԻՆԻ ԱՅՆ ԵՎ ԻՆՉԻ՞Ց ԴՐԴՎԱԾ ԵՍ ԳՈՐԾԵԼ/ԿԳՈՐԾԵՍ

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

Ու ղըրկեց Շահը իր թովիչ երգչին,
Գընա տե՛ս, ասավ, Թըմկա տիրուհուն,
Երգի՛ իմ սերը նըրա առաջին,
Պատմի՝ իմ փառքը ու գանձը անհուն:
Խոստացի նըրան իմ ոսկի գահը,
Խոստացի նըրան ամե՛ն, ամեն բան,
Ինչ որ կարող է խոստանալ Շահը,
Երկրակալ Շահը իր սիրած կընկան:
Գոռում են, դողում Թըմկա ձորերը,
Կանգնած է Թաթուլ Շահի հանդիման …
Զարկում են, զարկվում դուշման զորքերը,
Արյունը հոսում են Քըոի նըման.
Երգում է աշուղն իր Շահի սերը,
Անհուն գանձերը ու փառքն անսահման…
Լըսում է մատաղ Թըմկա տիրուհին.
Եվ վըրդովում են իր միտքը թաքուն
Դավաճան գործի ամոթը խորին
Եվ արքայական փառքն ու մեծություն…
Լսո՞ւմ ես դու, սիրուն տիկին,
Այ նազանի աննըման.
Նայի Շահին, իրեն զորքին,
Աշխարհքի տերն անսահման…
Մեզ պես տըկար մարդ է նա էլ
Սիրուններին միշտ գերի.
Քու ճակատին թագ է վայել
Լինիս շքե՛ղ թագուհի…
Լըսում է չքնաղ Թըմկա տիրուհին
Գիշեր ու ցերեկ, նորից ու նորից
Ու դարձավ նա լո՛ւռ, դալուկ, մըտախոհ,
Ու քունը փախավ սիրուն աչքերից…
Է՛յ, հըսկեցե՛ք, ի՞նչ եք քընում,
Քաջ զինվորներ Թաթուլի
Ո՞վ է, տեսեք, տանջվում մըթնում,
Քուն չի աչքին մոտ գալի:
Չըլինի՞ թե հաղթահարված,
Ճարը հատած թըշնամին
Դավ է դընում մութն ու մեռած
Կես գիշերվա էս ժամին:
Վե՛ր կացեք, վե՛ր, ամբողջ գիշեր
Մարդ է գընում ու գալի
Հե՛յ, զարթնեցե՛ք, առյուծ քաջեր,
Պահապաններ Թաթուլի:
Վե՛ր կացեք, վեր, հարբեցրել է
Իր հաղթական հյուրերին,
Բաց է անում դուռն ու դարպաս
Ձեր դավաճան տիրուհին:
Դա վ. դա՛վ. ելե՛ք… կոչնա՛կ… պահնա՛կ…
Ձենք առեք շո՛ւտ ձի հեծե՛ք, ձի…
Ճըռընչում են, դըղըրդում են
Դարպասները երկաթի:

Աղբյուր՝ Հովհաննես Թումանյան, «Թմկաբերդի առումը»

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

XII-րդ դարում Հայաստանը և շրջակա տարածքները սելջուկ-թուրքերի կողմից ենթարկվեցին հարձակումների: Հայ ժողովուրդը համառ կերպով պայքար էր մղում նրանց դեմ: Սելջուկ թուրքերի հերթական հարձակման ժամանակ պաշարման մեջ հայտնվեց Անի քաղաքը: Անիի պաշտպանության գործում 1124 թ. աչքի ընկավ Այծեմնիկ անունով մի կին: Նա Անիի պարիսպների վրա քաջաբար պայքարում էր Փատլուն ամիրայի զորքերի դեմ: Ըստ Սամվել Անեցի պատմիչի՝ Անիի պաշարումը տևել է մեկ տարի՝ բերելով մեծ ավեր և սով քաղաքում ու ողջ Շիրակում: Այծեմնիկը, կանգնած պարիսպների վրա, հերոսաբար մասնակցում էր այդ կռիվներին: Նա, անտեսելով իր վերքերը, թշնամու արձակած նետերը դուրս էր քաշում մարմնից և հետ ուղարկում:

Սամվել Անեցին իր տարեգրության մեջ ոգեշունչ տողերով ներկայացնում է Այծեմնիկի սխրանքը. «Եվ այս պատերազմում պարիսպների վրա իր առաքինությամբ պայծառացավ առնական սրտով մի կին, որը, պատվարի վրա ելնելով, արհամարհում էր խոր ցցված նետերը, որ վիրավորում էին նրան արտաքուստ»: Այս փոքրիկ հատվածն արտացոլում է ոչ միայն Այծեմնիկի անձնուրացությունը, այլև անեցիների համառ դիմադրությունը օտար տիրապետության դեմ:

Նիկողայոս Մառը նշում է, որ Անիի քաղաքային կյանքում առանձնանում էր կին-քաղաքացու դերը, որը ոչ միայն մասնակցում էր հասարակական նախաձեռնություններին, այլև կռվում էր քաղաքի պաշտպանության համար: Նույն կերպ Այծեմնիկը, չնայած վիրավոր լինելուն, շարունակում էր պայքարել՝ իր համաքաղաքացիների կողքին մնալով մինչև վերջ:

Աղբյուր՝ Աշխարհացույց կրթահարթակ